«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ հիմնադրելու, հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու մասին

2022-04-11

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/169 Լ

11.04.2022

«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ հիմնադրելու, հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու մասին

Նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետությունում նպաստել էլեկտրոնային թվային հասարակության ձևավորմանը, էլեկտրոնային տնտեսության խթանմանը, հասարակության թվային վերափոխմանը, այդ թվում՝ պետության կողմից հանրությանը մատուցվող թվային ծառայությունների արդիականացման գործընթացներին, թվային հիմնարար ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանը, կիբեռանվտանգության բարձրագույն մակարդակի, հատկապես՝ ֆինանսական համակարգում, ապահովմանը և Հայաստանի Հանրապետությունում ներդնել նոր որակի ֆինանսական ծառայություններ,
հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և 18-րդ հոդվածը, «Հիմնադրամների մասին» օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածները՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Հիմնադրել «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ)։
2.
3. Հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ներսես Հենրիկի Երիցյանին։
4. Հանձնարարել Հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ներսես Երիցյանին (կամ նրա կողմից լիազորված անձին)՝ օրենքով սահմանված կարգով գրանցել Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում և իրականացնել այլ անհրաժեշտ գործողություններ՝ կապված Հիմնադրամի հիմնադրման և գրանցման հետ, այդ թվում՝ ստորագրել կանոնադրությունը։
5. Սահմանել, որ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կազմված է 3 անդամից, և խորհրդի անհատական կազմը հաստատում է հիմնադիրը հետևյալ կազմով՝ երկուսին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից, մեկին՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից։
6. Հանձնարարել Հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ներսես Երիցյանին՝ Հիմնադրամի պետական գրանցումից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի հաստատմանը ներկայացնել Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը։
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ